



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 26 » 08 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0155-21

Ձեռնարկողը՝

«Լարգո-Վին» ՍՊԸ  
Կոփայքի մարզ, ք. Հրազդան Վանապուր 76<sup>ա</sup>

Գործունեությունը՝

Հանքավանի ածխաթթվային թերմալ հանքային ջրի  
հանքավայրի «Հանքավան» տեղամասի թիվ 3/63  
հորատանցքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվեկտրություն  
Կոփայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան



3/63	X = 4500264	Y = 8456814	X = 4500257	Y = 8456712	1957.9
------	-------------	-------------	-------------	-------------	--------

Ընկերության տրամադրված ջրաքանակը կազմում է՝ 10000.0մ<sup>3</sup>/տարի հանքային ջուր՝ ռեկրացիոն (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով:

Ընկերությունը ցանկանում է նաև հորատանցքից իրականացնել ազատ ածխաթթու գազի կորզում և ամբողջ ծավալով օգտագործել հորատանցքից առայսօր աննպատակ հոսող ջուրը:

Ածխաթթու գազի կորզման արտադրամասը բաղկացած է ածխաթթու գազի կորզման, լիցքավորման և պատրաստի արտադրանքի պահեստավորման տարածքներից, որի ընդհանուր մակերեսը կազմում է 139.79մ<sup>2</sup>:

Ածխաթթու գազի կորզման արտադրական տեխնոլոգիական ցիկլը հետևյալն է՝ գազանջատիչ սարքավորման միջոցով հորատանցքերում պարունակվող գազը անջատվում է ջրից գազանջատիչ տարողությունում, որտեղ ի սկզբանե հավաքվում է հորատանցքից դուրս եկած ջուրը: Ազատված գազն առանձին 100մմ տրամագծի խողովակաշարով կտեղափոխվի գազալցման արտադրամաս, կանցնի մեխանիկական ֆիլտրով, հետո ածխաթթու գազի ճնշման կոմպրեսորով, խոնավության հսկիչ ֆիլտրով, սառնարանով, կկուտակվի 30.0մ<sup>3</sup> տարողությամբ պահեստավորման ցիստեռնում, որտեղից 16մմ տրամագծի չժանգոտվող (խմելու որակի) խողովակով՝ կկատարվի 40.0 լիտրանոց բալոնների լիցքավորում, որի յուրաքանչյուրի տարողությունը կազմում է 20.0 կգ:

Լիցքավորված բալոնների յուրաքանչյուր խմբաքանակ լաբորատորիայի աշխատակցի կողմից կենթարկվի ածխաթթու գազի որակի մուտքային հսկողության՝ համաձայն համապատասխան հրահանգների:

Ընկերությունն ազատ ածխաթթու գազն իրացնելու է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Նախատեսվող գործունեությունը չի ուղեկցվում արտանետումներով ու ընդերքօգտագործման թափոններով: Դրա մասին է վկայում ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը, որը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 295916. 0 մ<sup>3</sup>/տարի կամ 9.38 լ/վրկ, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 2103962.8 մ<sup>3</sup>/տարի, ինչպես նաև այդ ջրաքանակից 30549.0մ<sup>3</sup>/տարի հանքային ջուր ռեկրացիոն (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով օգտագործելու համար:

Ընկերությունը նախատեսում է Հանքավանի ածխաթթվային թերմալ հանքային ջրի հանքավայրի «Հանքավան» տեղամասի թիվ 3/63 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 20 տարի ժամկետով:

Ընկերությունը հանքային ջուրը ռեկրացիոն նպատակով կշարունակի իրականացնել հանքավայրի տարածքում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող հողատարածքում կառուցված 6 լողավազաններում, իսկ ազատ ածխաթթու գազի կորզման գործընթացը՝ ազատ ածխաթթու գազի կորզման արտադրամասում:

Հանքային ջրի պաշարներ՝

A կարգով՝ 16.0 լ/վրկ կամ 1382.0մ<sup>3</sup>/օր,

B կարգով՝ 26.1 լ/վրկ կամ 225.0մ<sup>3</sup>/օր:

Ազատ ածխաթթու գազի պաշարները՝

